

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարը 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում է խմբային խմբագրատան մեջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редація «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարությունների համար վճարում են
խառնանշվել բառին 2 կոպեկ:

ԵԿՈՂ 1889 ԹԻԻՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մեր կը ստանանք սեփական ՀԱՐԱՔԻՆԵՐԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատանը (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում թամաշեկի տանը):
Կայսրության ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պետք է դիմել հետևյալ հասցեով. ТИФЛИСЪ, Редація газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպես պետք է վարվել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկրի ուսումնասիրություն հարցը. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԱՐԱՔԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի նոր հարստություն մեր ժողովրդական դրամանություն համար.

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԻ ԵՒ ՎԱՐՎԵԼ

Մեր նախընթաց երկու յոթուսներեց ընթերցողը իմացած կը լինի, որ Թիֆլիսի մեջ տիրող անսովոր ցրտի և մեր քաղաքում տարածված զանազան տարափոխիկ հիւանդությունների պատճառով այլ և այլ անձինք կամ հաստատություններ մասնաւոր կերպով հաստատ չեն կարողանալու օգնություն են անում քաղաքի ազգաբնակչության չքաւոր դասակարգին: Բայց այդ բոլոր օգնությունները մի որոշ կազմակերպություն կը կարողանան հասնել մեր անհաշիւ անապահներին և զործուծ, օգնություն սուղունքի մեջ համարաշուկուն չը կայ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՆՈՐ ՀԱՐԱՏՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յայտնի է «Սասունցի Գաւիթ» կամ Միջին դուռ» անունով ժողովրդական բերանացի պատմությունը, որ առաջին անգամ գրել և հրատարակել է հ. Սրուանձտեան իր «Գրոց-Բրոց»-ի մէջ, 1874 թվին: Այդ գեղեցիկ պատմությունը, իբրև մեր ժողովրդի ստեղծագործություն, իբրև նրա հին գիւցաղներգություններից մէկը, որ կարող է պարզել մեր հին կեանքի, մեր ժողովրդի աշխարհայեցողությունը, իդէալների անյայտ մնացած խնդիրները, դրսևել է և գրաւում է մեր բանասերների ուշադրությունը, թարգմանվել է ռուսերէն, ամբողջապէս մտել է մեր դասագրքերի մէջ (Գիւցաղներգական Աշխարհ): Մանկունեանցի): Բայց մինչև այժմ դեռ ոչինչ գիտնական և քննադատական աշխատություն չէ դուրս եկել այդ բանաստեղծության մասին, չը նայելով որ արդէն 14 տարի է, որ նա ընկած է մեր գրական հրապարակում: Չը գիտեմ անոնք էր պակաս, թէ սպասում էին որ աւելի ևս պարզվի «Գաւիթ Սասունցու» պատմությունը: Գիտեալ էր մի որոշ գնահատություն անել, ձեռքի տակ ունենալով միայն Սրուանձտեանի հրատարակածը և քննադատություն չարաչար կը սխալվէր, եթէ փորձէր իր հայեացքները ձևակերպել այդ հրատարակության մասին:

Այդպէս, օրինակ, երկրիս կառավարչը 400 ռուբլի է տուել իր մասնաւոր միջոցներին և յանձնել է այս դումարը ոստիկանությունը՝ աղքատ ազգաբնակչության մէջ վառելիք բաժանելու համար, քաղաքային վարչությունը վճարել է 1000 ռուբլի տալ նայն. նպատակով պ. Նայի ֆիլիոյան 500 ռուբլի է տուել նոյն նպատակով վերջապէս Թիֆլիսի առաջին գիմնազիայի խորհուրդը վճարել է իր բարեգործական գումարից 200 ռուբլի տալ իր ամենաաղքատ աշակերտներին հագուստ և անհրաժեշտ պիտույքներ մատակարարելու համար:

Եթէ քաղաքիս բոլոր հաստատությունները այդպէս գործեն, թէ կուզ միւսեանցի բոլորովին անկախ կերպով, դարձեալ դրանով մեծ օգնություն հասցրած կը լինէին քաղաքիս կարօտ ազգաբնակչությանը: Բայց բանը նրանման է, որ մեր հաստատություններին մեծ մասը, զլիսաւորապէս բարեգործական հաստատությունները, դեռ ևս ոչինչ չեն անում:

Մեր կարծիքով հարկաւոր չէ առանձին առանձին գործել, այլ հարկաւոր կը լինէր ցրտի և վարակիչ հիւանդությունների յայտնվելուն պէս անմիջապէս կազմակերպարարական միութեան օգնություն:

Սակաւութիւններից մէկը, որ չեն կարողանում իրանցից շինել, աւելացնել, սարքել, «աղով անել», այլ պատմում են իրանց լսածը: Այս իսկ պատճառով նրա պատմությունը մէջ շատ են հարուստ ձևեր, ոճի ոչ ու հարստություն. շատ տեղերում պատմությունը ոտանաւորի ձև է ստանում, դուրս է մի նշան, որով կարելի կը լինի ասել թէ այդ դիցաղներգությունը մի ժամանակ ոտանաւոր է եղել ամբողջապէս. շատ կան երգեր, որ, ինչպէս պատմում է պ. Արեղեան, երգել է մոկացին մի ինչ-որ առանձին եղանակով: Բայց հ. Սրուանձտեանի հրատարակության մէջ թիւ չեն երգերը:

Գանք բուն պատմությունը:

Հ. Սրուանձտեանից «Սասունցի Գաւիթ» կարդացողները *) զիտեն, որ դա մի ամբողջ, անվաւ, այսինքն անթերի պատմություն է: Արեւմտեան և Սասնաւոր եղբայրները հիմնում են Սասունի բերդը: Արեւմտեան Մարի տէրն է դաւանում և ունենում է մի քանի որդիք, որոնց մէջ՝ նըշանաւոր էին Սեւակ-Յովսէփ և Գաւիթ: Այս իսկ Գաւիթն է Սասունցի այն գիւցաղը, որ զանազան քաղաքներում իր կատարելուց յետոյ իրան կին է աւանում կաղզուանի խանգուղ-խաթունը, որից ծնվում է Միջին գիւցաղը: Ընթերցողն ուրիշ սպասելիք չունի. տեսնում է ծնողների ու որդիների, տեսնում է որ պատմությունը վերջանում է Միջին հետ: Բայց Սոկրատ.

*) «Գրոց-Բրոց»-ը այժմ հազուադէպ գիրք է. և «Սասունցի Գաւիթ» ևս կարդացել եմ պրոֆեսոր Պատկանանի «Мүшәккія дилектты» անունով աշխատության մէջ, ուր ամբողջովին արտատպւած է այդ պատմությունը:

պիւ քաղաքացիներից մի ժամանակաւոր ստուարություն մասնաժողով, որին պէտք է մասնակցէին բոլոր ազգութիւններին պատկանողները և այդ մասնաժողովը անմիջական յարաբերությունների մէջ պէտք է միտնէր՝ քաղաքային վարչութեան, դպրոցների, ամեն դասնականը՝ պատկանող ծուխերի և եկեղեցիների հետ, քաղաքիս մէջ եղած բոլոր թէ հայ, թէ ռուս և թէ վրաց բարեգործական ընկերությունների հետ, վերջապէս պէտք է յորդորէր մասնաւոր անձանց, նուիրատուութիւններ անելու և ընդունելու այդ նուիրատուութիւնները:

Մասնաժողովի նպատակը պէտք է լինէր՝ պոլիցիայի, եկեղեցիների երեցիությունների, դպրոցների վարչությունների ձեռքով հաստատու տեղեկությունների ստանալուց յետոյ, թէ որտեղ ամենամեծ կարիք կայ, և ինչ տեսակ կարիք, յանձնել ձեռք բերած գումարները թէ պոլիցիայի բաժիններին, թէ ամեն դասնականը դպրոցներին, թէ ծուխերի երեցիություններին, որպէս զի սըրանք մատակարարեն իրանց շրջանի չքաւորներին՝ ուտելիք, վառելիք, հագուստ և դեղեր:

Մասնաժողովը պէտք է իր կարգադրություն տակ ունենար մի քանի բժիշկներ, որոնց պէտք է տար, եթէ ոչ ժամանակաւոր ուժերի, զոնէ կառքի փող, պէտք է յարաբերություն հաստատէր՝ դեղատների հետ, որպէս զի մասնաժողովի մարկայով չքաւոր հիւանդը, կամ նրա մասին հոգացող բժիշկը կարողանային դեղատնից դեղ ստանալ, եթէ ոչ ձրիապէս, զոնէ շատ պակասեցրած գումար: Մասնաժողովը պէտք է յարաբերություն հաստատէր վաճառականների հետ, բաղարի հետ, հագուստ, վառելիք, ալիւր մեծ գումարով աւելի է ժան գնով առնելու համար:

Մասնաժողովը ազէն տն և բ, գործակալները՝ ժողովրդին անմիջական օգնություն հասցնողները, կը լինէին՝ քաղաքային վարչություն կատարող պաշտօնեաները, ոստիկանություն պաշտօնեաները, դպրոցների վերակարգները և քաղաքիս ամեն դասնականութիւնների եկեղեցական երեցիությունները:

Սակաւութիւններից մէկը, որ չեն կարողանում իրանցից շինել, աւելացնել, սարքել, «աղով անել», այլ պատմում են իրանց լսածը: Այս իսկ պատճառով նրա պատմությունը մէջ շատ են հարուստ ձևեր, ոճի ոչ ու հարստություն. շատ տեղերում պատմությունը ոտանաւորի ձև է ստանում, դուրս է մի նշան, որով կարելի կը լինի ասել թէ այդ դիցաղներգությունը մի ժամանակ ոտանաւոր է եղել ամբողջապէս. շատ կան երգեր, որ, ինչպէս պատմում է պ. Արեղեան, երգել է մոկացին մի ինչ-որ առանձին եղանակով: Բայց հ. Սրուանձտեանի հրատարակության մէջ թիւ չեն երգերը:

Գանք բուն պատմությունը:

Հ. Սրուանձտեանից «Սասունցի Գաւիթ» կարդացողները *) զիտեն, որ դա մի ամբողջ, անվաւ, այսինքն անթերի պատմություն է: Արեւմտեան և Սասնաւոր եղբայրները հիմնում են Սասունի բերդը: Արեւմտեան Մարի տէրն է դաւանում և ունենում է մի քանի որդիք, որոնց մէջ՝ նըշանաւոր էին Սեւակ-Յովսէփ և Գաւիթ: Այս իսկ Գաւիթն է Սասունցի այն գիւցաղը, որ զանազան քաղաքներում իր կատարելուց յետոյ իրան կին է աւանում կաղզուանի խանգուղ-խաթունը, որից ծնվում է Միջին գիւցաղը: Ընթերցողն ուրիշ սպասելիք չունի. տեսնում է ծնողների ու որդիների, տեսնում է որ պատմությունը վերջանում է Միջին հետ: Բայց Սոկրատ.

*) «Գրոց-Բրոց»-ը այժմ հազուադէպ գիրք է. և «Սասունցի Գաւիթ» ևս կարդացել եմ պրոֆեսոր Պատկանանի «Мүшәккія дилектты» անունով աշխատության մէջ, ուր ամբողջովին արտատպւած է այդ պատմությունը:

Մասնաժողովը պէտք է իւրաքանչիւր շաբաթվայ վերջում հաշիւ պահանջէր իր գործակալներից, թէ ինչքան են բաժանել պիտույքները, ու՞մ են բաժանել և ինչ գումարի. ապա սրանք պէտք է ներկայացնէին և իրանց մօտ մնացած պիտույքների, կամ գումարի հաշիւը:

Այդ տեսակ համարաշուկութեամբ, այդ տեսակ հաստատ հիմքերի վրա միայն հնարաւոր է իրական ժողովրդական օգնութեան կազմակերպությունը որ և է աղէտի, կամ փողի ճիշտամի ժամանակ:

Մասնաժողովը պէտք է մի և նոյն ժամանակ զոււար տար բժշկական վարչություն հնարաւոր միջոցներ գործ դնելու քաղաքի անառողջ մասերը գոնէ կարողութեան չափ, ժամանակաւոր միջոցներով, զէ զ ի ն ի կ յ յ ա յ ի միջոցով, զէ թ մասամբ առողջացնելու համար:

Այդ յոգուածը կարողով մեր հասարակական կարծիքը ղեկավարները անշուշտ կասեն, որ իրանք էլ գիտեն թէ պէտք է այդ բոլոր անել, բայց դարձեալ մենք հաւատացած ենք, որ ոչինչ չեն անի և դարձեալ մի քանի մասնաւոր անձինք, հատ հատ օգնություն կը հասցնեն ժողովրդին իրանց կարողութեան չափ:

Իսկ այս տեսակ օգնություն տար ընդհանուր աղէտի ժամանակ, ուրիշ բան չէ, եթէ ոչ մի կաթիլ ջուր աւելացնել ահագին ծովի մէջ:

Ինչպէս անել որ լրագրական յոթուածի միջոցով յեղափոխել անարժ հասարակությունը, ինչպէս անել որ անարժ, անգործ հասարակություն մէջ ներշնչել, եռանդ, գործունէություն ոգի, քաղաքացիական պարտաւորություն պարտաճանաչությունը, հասարակաց անհրաժեշտ պարտաւորությունների, ընկերական համեմաշուկութեան, և հասարակաց անձնապաշտպանութեան դադարեցնել:

Գ. Ա.

պատմածից պարզ երևում է, որ «Սասունցի Գաւիթ» միայն մէկ ձև է մի երկար դիւցաղն երգ ու թեան: Մոկացին ասել է պ. Արեղեանին, որ այդ մեծ դիցաղներգությունը քաւասուն ձև է ունի, որ պատմում են քաւասուն գիշեր: Սասունցի Գաւիթը, հետեւաբար, այդ դիցաղներգությունն 39-որդ ձև է, որովհետեւ նրանից յետոյ գալիս է Միջին առանձին պատմությունը, որ վերջինն է:

Եւ իբրեւ, մոկացու պատմությունը սկսվում է իբրև շարունակություն. Սասնաւոր և Արեւմտեան մասին ոչինչ տեղեկություն չը կայ:

Գնում եմ պատմություն սկիզբը (երգ է).
«Գաւիթ» զոգորմին տը տամ Սասնաւորին,
> > > Արեւմտեանին,
> > > Բաղդասարին,
> > > Մեղրիսի ըրհանին,
> > > Սեւակ-Յովսէփին,
> > > Յուսէփ-Յովսէփին,
> > > Յուսէփ-Յովսէփին,
> > > Թուրան Գաւիթին
> Ականջ է բողի հայրի-մայրին:
«Գաւիթ» ինչ կը մտնի...
Արեւմտեանը այդ Սասնաւորը, Արեւմտեանը, Բաղդասարը, Մեղրիսի ըրհանին, Թուրան Գաւիթը **),
**) Նա հաւատացրել է, որ այդ քաւասուն ձևերից ինքն լաւ գիտէ միայն «Սասունցի Գաւիթ» և «Միջին» կիսատ:
***) «Թուրան Գաւիթ» չը պէտք է խառնել «Սասունցի-Գաւիթ» հետ, ասել է պատմողը և պատմել է մի փոքրիկ կտոր «Թուրան-Գաւիթ» պատմությունից, որ նոյնպէս գրել է պ. Արեւմտեանը: Այդ Գաւիթը (Թուրան) է կոչվում այն պատմաւորը, որ երբ նրան երկուս ժամանակ ձեռքի վրա խաղացնելու են եղել, նա զէպի բարձր թռչնաւոր և եղել:

ՆՆՈՒՐԻՆ ԼՈՒՐԻՆ

Թաւրիզի հայ հասարակութիւնը թատերադրող Գարբիէլ Սունդուկեանի յօրեւեանի առիթով պատրաստել է հետեւեալ ուղերձը, որը պէտք է ներկայացվել յօրեւեանին՝ նրա յօրեւեանի տօնա- լամբումն օրը, որ չը կայացաւ: Ուղերձին ստորագրել են 20 հայեր: Այդ ուղերձը ուղարկ- ված է մեր խմբագրութեան և ահա նրա բովան- ղակութիւնը. «Բազմբախտ հեղինակ Գարբիէլ Սունդուկեան, Հայ իմացական և գրական աշխար- հը տօնում է այսօր կովկասի մայրաքաղաքում ձեր բազմաթիւ գրականական գործունէութեան քսանհինգամեակը. թոյլ տուէ՛ք և մեզ, հեռաւոր Պարսկաստանի ասպնջական հայերիս, միանալ մի բոլոր հոգով այդ տօնախմբութեան հետ և ասել. այն կեանքը, որ դու նկարագրեցիր, այն տիպերը, որ դու ստեղծեցիր, այդ կեանքը մեր սեփական կեանքն է, այդ տիպերը մեր սեփա- կան տիպերն են. հարստահարող և հարստահա- րեալ, Արուսի և Պէպո, — ահա մեր կեանքի բուն նկարագիրը: Հայը իր բոլոր բարի և յոռի յատկութիւններով այդտեղ է. կից մենք պիտի շառագունենք Արուսիին պէս կեղեքիչ վաճառա- կան-տիպից, որքան պիտի հրճուենք այն առաքի- նական բարեմասնութեանց վրա, որ Պէպոն — ժո- ղովրդի, ուրեմն և մեծամասնութեան ներկայա- ցուցիչը — մարմնաւորում է իր անձի մէջ: Այսօր մի փոքրիկ, բայց ձեր տաղանդը և գործունէու- թիւնը զնանաո՞ղ խումբ հայերի, զգում է, որ երախտագիտութեան պարտք ունի ձեզ հասու- ցանելու. բայց նա չունի ոսկի, կնիքով ձեզ ըն- ծայելու, չունի մի նիւթեղէն պարզ և ձեզ ներկա- յացնելու, այլ տալիս է ձեզ մի պարզ, որ քան ոսկի և արծաթ պատական է, որ նիւթեղէն չէ և անցաւոր, այլ հոգեւոր և մշտնջենաւոր: Այդ պարզն է «Պէպոն» է թուրքերէն լեզուով թարգ- մանված, և այսօր պիտի ներկայացվի այն ժո- ղովրդի առջև, որի մէջ ապրում ենք. այդ հայ- կական ստեղծագործութեան արդիւնքն է, որ այ- սօրվանից սկսած հայի հետ միասին պիտի վայե- լէ և պարսկերէն կեցցեն ուրեմն, յաւերժ, ու հայ ստեղծագործ, կեցցեն, դու, Գարբիէլ Սունդու- կեան»:

Թատերադրող Գարբիէլ Սունդուկեանի յօրե- լեանի առիթով Նոր-Նախիջևանից՝ տ. Սօֆիա և պ. Գրիգոր Զախունշեանների ստորագրութեամբ ստացանք հետեւեալ հեռագիրը. «Հայոց մատաղ գրականութեան արդիւնաշատ և զօրեղ մարտնչո- ղին՝ մեր Մովսիսին, ողջօրն և երախտադէտ շը- նորհաւորութիւն»:

Զանազան քաղաքներում և առհասարակ Թիֆ- լիսից դուրս գտնվող հայերը, կարծելով որ պիտի

տօնով Գարբիէլ Սունդուկեանի յօրեւեանը, դեկ- տեմբերի 22-ին, ինչպէս յայտարարել էր Գրամա- տիկական ակումբի վարչութիւնից կազմված յանձ- նաժողովը, ուղարկում են մեր խմբագրութեանը զանազան ուղերձներ, նամակներ և հեռագիրներ: Յարգելի թատերադրող յայտնած լինելով, որ չէ մասնակցելու յօրեւեանի տօնախմբութեանը, չէ ընդունում ոչ ուղերձներ և ոչ էլ շնորհաւորական նամակներ և հեռագիրներ: Սակայն որպէս զի օտար տեղերից ստացվող այդ տեսակ շնորհաւո- րական նամակները, գէթ առանց յօրեւեանը տօ- նելուն, իրանց նպատակին մասամբ հասնեն, մենք կարծում ենք, որ ինքն մասնաժողովը պի- տի ոտանայ և ձեռք բերի այդ բոլոր հեռագիր- ները, նամակները և ուղերձները, գուցէ և նուէր- ները, և կարգադրէ այնպէս, ինչպէս վայել է:

ՄՕՁԳՈՎԻ հայ օրիորդաց դպրոցի հոգաբարձու- թիւնը խնդրում է մեզ տպել հետեւեալը: «Չմը լրագրի № 142-ի ներքին լուրերում տպված էր լրեր թէ մեր ստանձնած զարդաներում ծեծ և ականջաքաշութիւն է պատահել. պաշտօնապէս յայտնում ենք, որ դա ճիշդ չէ»:

Պ. Եսայի Փիթոյեան, ինչպէս հաղորդում են տեղական ուսու լրագիրները, ուղարկել է Թիֆլի- սի քաղաքային վարչութեան 500 ռուբլի, գործ դնելու աղքատ ընտանիքներին օգնելու համար:

Ներկայումս Զանջուղագով եղբայրների գործը կրկին յարուցվում է առել: Երբեմն հարուստ, բայց այժմ սնանկ Զանջուղագովների գործը նո- ռից սկսեց զննվել դատաստանական պալատում, զեկտեմբերի 21-ին: Պարտաժողովը իր ժամանա- կին ըննելով Զանջուղագովների գործը, վճռել էր, որ նրանք սնանկացած անբաղ-վարտապան- ներ են: Սակայն երբ այդ գործը զննվեց Թիֆլի- սի նահանգական դատարանում, այդ դատարանը համարեց նրանց սնանկացած անբաղ-վար- տապաններ: Անկասկած դատաստանական պալա- տը կորուէ թէ արդեօք Զանջուղագովները ան- բաղ-վարտապաններ են թէ անդոյշ-պարտա- պաններ: Այդ գործի առիթով Զանջուղագովների իրօք անբաղ-վարտա պարտաւերերից մէկը գը- բում է ի միջի այլոց հետեւեալը. «Ինչ օգուտ, թէ արդեօք Զանջուղագովները անբաղ-վար, թէ ան բաղ-վար պարտապաններ են. ամեն բան ջուրն է ընկել, և այդ բաւերով մեր պարտաւերերից և ոչ մէկի փորձ չի կշտանայ...»

«Մշակի» անցեալ № 146-ի մէջ, նախալիբլին ներքին լուրերում մի սխալ է մտել. տպված է «Новое Время» լրագիրը գրել է այնպէս», պի- տի լինի «Новое Время» լրագիրը գրէ գրէր այնպէս, և այն»:

որդուն, Աստուծոց խնդրում է որ Մհերը դա- ւակ չունենայ և մինչև Գրիստոսի գալուստը չը մեռնի: Աստուծո լսում է, Գարբիէլ հրեշտակը կարում է Մհերի մէջքի մի երակը:

Կուէից յետոյ միայն Գաւիթը նկատում է որ «խաչ-պատարագին» սեպցել է, իսկոյն յիշում է Զմուցիկի-Սուլթանին տուած խօսքը: «Կնիկ, ա- տում է, Մհերը չէր ինձ հետ կուտղը, այլ «Վա- րուժայ բանձրիկ Աստուածածինի խաչ-պատարա- գին»։ Եւ գնում է կուէից Զմուցիկի-Սուլթանի բակում լողանում է ջրի մէջ և մինչդեռ հագնում էր չորերը, Զմուցիկի-Սուլթանը տաքացնում է գութանի խոփը, դարկում է նրա մէջքին ու ըս- պանում: Խանութ-խանութ լսում է այդ գործը, թոյն է խմում, մեռնում: Ամին մի քայլում հըս- կայական պատկերներ, հսկայական արարքներ... Այնուհետև մենակ է Մհերը: Չնայելով թողնելով որ նա դուրս է անում նրան Սասունից, ասելով որ նա չար է, եթէ մնայ քաղաքում, ամենքին կը կոտո- բէ: Մհերը գնում է, իր հօր ու մօր գերեզման- ների վրա լաց լինում, հարցնում է նրանցից թէ ինչ անէ: Հիանալի է այս կտորի նկարագրու- թիւնը:

«Խեղիկ, վինչի անեմ, խեղիկ, վինչի անեմ. Ասոր ձը Սասնայ քաղաքէն Ռէհար ի խանած»:

Հոկայական արցունքին զիթութեամբ է նայում երկինքը, ձայն է ընկնում գերեզմանի մէջ, հայրը պատասխանում է.

«Ողբի, վինչի անեմ, Գաղի մէջանի ի ձեռնէս, Գաղի մէջանի ի ձեռնէս,

Յիշեցնում ենք, որ երկուշաբթի օր, ամսիս 26-ին, Թիֆլիսի ժողովարանում պիտի լինի պա- րահանդէս՝ յօդուա Հայոց Բարեգործական ընկե- րութեան:

Բաղաբիս բժիշկներից ոմանք մեզ յայտնում են, որ մասամբ այժմեան արտասովոր ցրտերի և սառնամանիքի պատճառով, քաղաքում տարած- ված մի քանի տարափոխիկ հիւանդութիւնները, ինչպէս, ծաղիկը, դիֆտերիա և քուէշը զգալի կերպով նուազել են: Սակայն նոյն բժիշկների կարծիքով, այս ցրտերի ժամանակ, աղքատ և չունեող դասակարգի մէջ, վատ կենցաղավարու- թեան պատճառով, կարող են առաջ գալ նոր և ուրիշ տարափոխիկ հիւանդութիւններ:

Մեր աշխատակիցներից մէկը, որ այս օրերս պտտել է քաղաքի զանազան աղքատ թաղերը, յատկապէս աղքատ դասակարգի դրութեանը ա- լելի մօտ ծանօթանալու նպատակով, հաղորդում է ամենաողորմի մանրամասնութիւններ չունե- լուր ընտանիքների մասին: Թողնելով մօտիկ ա- պագային այդ մասին մի ամփոփ նկարագրու- թեան տպագրելը, առ այժմ հիմնվելով այդ տե- ղեկութիւնների վրա, չենք կարող չը յայտնել, որ քաղաքի աղքատ դասակարգի դրութիւնը մի- անգամայն անտանելի է: Խոնար, խարխուլ, և ցրտին չը դիմացող փոքրիկ տներակներում ապ- ըող բազմաթիւ ընտանիքներ վառելիք չունենա- յառ տեղերում թէ կանաչք և թէ երեսպը ցե- րեկով էլ փայթալոված են վերականգնի մէջ, տա- նից դուրս չեն գալիս և ամբողջ օրը փակված մնալով՝ տուր լցնում են սարսափելի գարշահո- տութեամբ, որը ջերմութիւն է համարվում: Այդ պիտի տներից շատերում պատկած են հիւանդներ էլ: Երեխաները պտտում են կիսամերկ և բոբիկ, իսկ շատ տեղ էլ այդ կիսամերկ և բոբիկ երե- խաները գնում են մուրալու կամ մի ուրիշ կերպ մի քանի կօպէկ աշխատելու հացի համար: Աղ- քատութիւնը սովորական է. օրական հացի կա- րօտ ընտանիքներ բազմաթիւ են: Գետնեկած թաղերում կեղտը և գարշահոտութիւնը սովորա- կան են. նոյն իսկ այս ցրտերին՝ առանց քիթը բռնելու անցնել չէ կարելի: Թուառութիւնը ան- տանելի է մանաւանդ այն պատճառով, որ այդ բազմաթիւ խեղճներ օգնութիւն դեռ չեն ստա- նում ոչ մի կողմից:

Ներկայ թվականի սկզբի 9 ամիսների ընթաց- քում պիտական մուտքը եղել է 575,359,000 ռուբլի. իսկ այդքան ժամանակամիջոցում ծախս եղել է՝ 561,503,000 ռուբլի:

Թէ և կոմ Լօրիս-Մէլիքովի մարմինը Թիֆլիս

Թափի մազերն երեսէս: Գնա Հալաբայ քաղաք, Լա քո խաց թխուկ է, Բո կերակուր եփուկ է»:

Մայրն էլ նոյն խորհուրդն է տալիս, և նա գնում է Հալաբ: Ժողովուրդը իր չը սիրած հերոսի ճանապարհը փշերով է զարդարում: Հօր անէծքը կրող Մհերը տեղը գործի է կատարում, նա իր հօր հակա- պատկերն է, յարձակվում է գողի պէս, խլում է անպաշտպան մարդկանց ձիաները, զօրք է կո- տորում, դաւաճանութեամբ նրա ետքն անցնելով: Նրան միշտ պատահում են ջաղուկ պատաններ: Դրանցից մէկի աղջիկը, Գոհար-Սաթուրը իրան կին է առնում, քառասուն տարի ապրում է նրա հետ, բայց, ի հորիկ, զաւակ չէ ունենում: Կնոջ սորգները բռնում են նրան, զգում մի խոր հորի մէջ: Պատճառը ոյժի չափազանց շատութիւնն է: Ինչպէս պարսկական «Շահ-Համէի» հերոս Ռուս- տամը, Մհերն էլ այնքան սարսափելի ոյժ է ըս- տանում, որ հողը չէ դիմանում նրա քոնների տակ, ոտները խլում են հողի մէջ: Այդ հորից աղաթվելով Մհերը քսան տարի խալթայ այրի մէջ խնդրում, աղաչում է Աստուծոց, որ Վանայ այրը գնալու հրաման լինի: Խնդրը կատարվում է, իր սեփական ոյժից յաղթված հսկան տեղափոխվում է և այսօր էլ Վանայ այրի մէջ է: Ինչպէս տեսնում էք, Մհերը մեր Արտա- չէսեան Արտաւազդի հետ քիչ նմանութիւն չու- նի:

Ահա այն հարստութիւնը, որ պ. Աբեղեանը

բերելու մասին դեռ վերջնական որոշ տեղեկու- թիւն չէ ստացված, բայց, որքան մեզ յայտնի է, միանգամայն հաւանական է, որ հանգուցեալի մարմինը կը բերվի իր մայրենի քաղաքը՝ Թիֆ- լիս, և կը թաղվի Վանքի մայր-եկեղեցու բա- գում: Տէր-Ղուկասովի և գեներալ Շելկովիչովի գերեզմանների կողքին:

Թէ մայրաքաղաքների և թէ դաւառական ուս- սաց մամուլը գրեց և գրում է Լօրիս-Մէլիքովի մահուան առիթով բաւական յօդուածներ: Սակայն այդ բոլորն էլ, ինչպէս կովկասեան մամուլի գը- բածը, համարեա բացի կենսագրական տեղեկու- թիւններից և ժամանակագրական տեղեկութիւն- ներից, ու մի քանի ընդհանուր գովասանական խօսքերից, — ուրիշ մի առանձին ըննադատութիւն չէ պարունակում:

Փորձը ամենից լաւ է պարզում հարցերը, և այդ փորձի վրա հիմնվելով ժողովրդական լուսաւո- րութեան միջնադարիւնը, ինչպէս հեռագիրն էլ արդէն տեղեկութիւն էր բերել, վճռել է նորից բանալ գիմնադիւնների, պրօգրիմագիւնների և ըն- տական դպրոցների պատրաստական դաստանե- րը: Դրանք, ինչպէս լավում է, պէտք է բացվեն 1889 թվ յունվարից:

Հատուտ աղբիւրից մեզ տեղեկացնում են որ Թիֆլիսի առաջին գիմնադիւնի աղքատ աշա- կերտներին օգնող բարեգործական ընկերութեան մասնաժողովը, նախաձեռնութեամբ այդ ընկե- րութեան պատուաւոր նախագահ Իլիան Ն. Վ. Արդուկեան-Երկայնաբազուկի և գիմնադիւնի ղիբէլտօր Լ. Վ. Մարկովի, վճռել է տալ գիմ- նադիւնի մանկավարժական խորհրդին 200 ռուբլի, որով պէտք է զնվեն գիմնադիւնի աղքատ աշակերտների համար անհրաժեշտ հագնելիք՝ ինչպէս վերարկու, շորեր և կօշիկներ:

Սասիկ ցրտերի պատճառով Թիֆլիսում ամե- նակարեւոր միջերեքներ շատ թանգացել են: Այդ թանգանալուն աւելի է նպաստում այն հանգա- մանքը, որ հաղորդակցութեան ճանապարհները կանոնաւոր կերպով չեն բանում և Թիֆլիսում սպասվող ապրանքներ չեն ստացվում: Երկաթու- ղու դնացները միանգամայն անկանոն են բա- նում՝ ցրտերի պատճառով: Նոյն ցրտերի պատ- ճառով, ինչպէս լավում է, Օդեսայից եկող նաւե- իր արգելքի են հանդիպել և Թիֆլիսի շատ ա- ռւետրականներ առաջիկայ տօներին չեն էլ կա- րող ստանալ իրանց սպասած ապրանքները: այդպիսով գուցէ տօների ժամանակ աղգաբնա- կութեանը հարկաւոր ապրանքները շատ սակաւ կը լինեն մեր քաղաքում:

բախտ է ունեցել հանել ժողովրդի միջից մեր գրականութեան համար Այդ վարիանտը երկու անգամ կարգացվել է մեր ընկերական շրջանում և երկու անգամ էլ տեսակ տեսակ քաղցրու- թիւն է տուել մեզ: Ես մի կողմ եմ դնում այն նշանակութիւնը, որ կարող է՝ ունենալ այդ պատմութիւնը զիտականների ձեռքում. վերց- նում եմ բուն գեղարուեստական նշանակութիւ- նը: Բազմաթիւ մտքեր, բազմաթիւ իդէաներ, ձեւեր է տալիս ժողովրդի այդ ստեղծագործու- թիւնը: Եւ երբ պ. Աբեղեանին կաջողվի հրա- տարակել «Սասունցի Գաւիթը» և «Մհերը» (հա- յերի մէջ գիրք հրատարակելուց էլ ինչ դժուար գործ), այն ժամանակ ես աւելի մանրամասն կը խօսեմ նրանց գեղարուեստական արժանաւորու- թիւնների մասին:

Բայց առ այժմ մի շատ կարեւոր հարց է Տե- սանք որ մեր ժողովրդի մէջ կայ մի բերանացի դիւցազնիւրդութիւն, բաղադրած քառասուն ձի- ւերից, որոնցից մէկի կամ երկուսի համեմ ու հո- տին նեք առել: Ո՞վ պէտք է աշխատէ եթէ ոչ բոլորը, զոնէ մի հինգը, տաք անյայտութիւնից, կորուստից աղաւելու: Ո՞վ պէտք է անէ: Եւ մի- թէ Պօլսի ֆրանսսամի գրագէտների մէջ չի ճար- վի հ. Արտանախանի գոնէ մի հատ հարադատ աշակերտը...:

*) Մովսիսին խոստովանել է, որ պատմութեան Մհերի ճիշդ լաւ չը գիտէ:

ԹԱԽԻՅԻՑ արտասահմանի հայոց լրագրողներին գրում են հետևյալը. «Հանգուցեալ Գրիգորիանի նուիրած տղարանական մամուլը մէկ ու կէս աւելի է, որ հասել է արդէն Գալիքի ու գետեղիւն է նոր կառուցված շինութեան մէջ իւր ամենայն պարագայներով իսկ դորձադրութեան կը դրուի Առաջնորդին թեմից վերադառնալուց յետոյ Արդէն առաջնորդը մի քանի անձնաւորութիւններին դիմել է գրաւոր կերպով և խնդրել է, որ տպարանի օգտին նուիրատուութիւններ լինին, ուստի աստիճանաբար կ'աւելանային 500 բուլղի. միանգամայն խոստացել է ըստ իւր կարողութեան ուրիշ անգամներ ալ նուիրատուութիւններ անելու. մի ուրիշ անձնաւորութիւն ևս խոստացել է նուիրելու տպագրական թուղթեր»:

Մօսկվայի «Գրականական ընկերութեան» վերջին ընդհանուր նիստին կարգացվել է տ. Նեկրասովայի «Հայկական նոր գրականութիւն» վերնագրով գրութեանը Տիկ. Նեկրասովա գրել է իր քննութիւնը հիմնովում «Armenische Bibliothek»-ի հրատարակութիւնների վրա «Русск. Вѣд.» լրագիրը իր վերջին համարներից մէկում տպել է յօդուածի բովանդակութիւնը: Մեզ դարձանում է որ տ. Նեկրասովա հայ հեղինակների վրա ուսուցիչ հեղինակների ազդեցութիւնն է տեսնում: Գուցէ նմանութիւն լինի երկու ժողովրդների հեղինակների մէջ, բայց ազդեցութիւնը տարբեր կը լինի, քանի որ հայերը և ուսուցիչը ոչ միայն ապրել են ոչ էլ ակզնեբում մօտիկ յարաբերութիւններ են ունեցել: Նեկրասովա շատ համակրութեամբ է խօսում Սոսոյեանցի, Բաքի, Գիլի և Պատկանանի մասին: Երբի յօդուածը կը տպվի, և այն ժամանակ մենք աւելի մօտիկ կը ծանօթանանք ընթերցողներին նրա բովանդակութեան հետ:

Մեր դերասան Ազատեանի յօդուածը տօնելու մասին Կ. Պոլսի «Արեւիկ» լրագրում կարգում ենք հետևյալը: «Պ. Ազատեանի դերասանական դորձուէութեան քանհինգամայն յօդուածը տօնելու դադարար, որ առաջին անգամ յայտնվեցաւ «Արեւիկ» միջոցաւ, իրականութիւն դառն է, և բերկրութեամբ կրմանք թէ յանձնաժողով մը կազմուած է այս նպատակաւ: Գրեցանք պիտի տօնվի թատերական շքեղ ներկայացմամբ մը, յորում հայ ազգի տաղանդաւոր դերասան իւր գլխաւոր դերերէ միոյն մէջ փայլել է դատ, պիտի արտասանէ իր իրն Տիւստամի-փայլալի ընտրի մէկ մենախօսութիւնը: Թէպէտ յանձնաժողովը վերջնական կազմակերպութիւն լրացած է տակաւին, սակայն կրմանք թէ անդամները կը կազմեն վաւեր. Տիգր. Երասմեան, մեծ. Գեորգ Ապտուլահ, Գով. Թորոսեան, Թովմ. Եսայեան, Մինաս Զերալ և Գառնիկ Ֆրեդեան: Գանձաժողովը վաղը, զեկտեմբերի 11-ին, ժամը 8-ին, ի նիստ պիտի գումարի ի բերաւ»:

Մեզ ուղարկված է «Երեսայր» վերնագրով մի գրութի, որը մանկական ընթերցանութեան համար նշանակած փոքրիկ գրութեան է ուսուցանողներին ժողովածու է: Գրութի բովանդակութեան մէջ մտած գրութեանը, որոնց հեղինակն է պ. Արշակ Մեհրաբեան, քիչ բացառութեամբ տպագրված են եղել «Աղբիւր» և «Բարաստան» մանկական ամսագիրներում, որոնցից և արտատպված են: Հրատարակելը հրատարակութեան արտաքին կողմի վրա բաւական ուշ է դարձրել, թէ և պատկերները մի փոքր անաշուղ կը են, և մենք խորհուրդ կը տանք երկուստեք հեղինակին աշխատել իր դործի վրա, աշխատել եթէ կարող է, աւելի արդիւնաւէտ դարձնել իր գրութի մանկական ընթերցանութեան համար, և չը մտնել մանկական ընթերցարանի մէջ պօղեմիական և ինքնագով յօդուածներ, որոնք միանգամայն անտեղի և մնասկար են այնպիսի ժողովածուի համար, որը պէտք է տրվի մանուկների ձեռքը:

Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ հաղորդել, որ նոյնմբերի 27-ին Թիֆլիսի ժողովարանում կայացած պարահանդէսից յօդուած ընկերութեան մուտք եղաւ 1.041 բուլղի, որից հանելով 181 բուլղի ծախսը, դուռ արդիւնք մնաց 860 բուլղի:

Գիւրգի դիւղից մեզ գրում են. «Գիւրգի դիւղը արքունական է և ամեն մի ծուխ ունի իր սեփական վարելահողերը: Վերջին ժամանակներս ժողովուրդը բազմանալով հողերը բաւականութիւն չեն տալիս գիւղացու պահանջներին, այդ պատճառով գիւղացիները վճռեցին այստեղից ուրիշ տեղ գաղթանքից բոլորովին լսել վարելահողերը, թէ իրանց պէտքերը լցուցանելու և թէ գաղթականութեան առաջն առնելու: Գիւրգի երկուստեքները պահանջներն են դիմում: Մնալով քաղաքում մի քանի տարիներ մշակութիւն անելով, կամ արհեստ սովորելով, իսկ յետոյ կամ թէ միջոց չունենալով գիւղում դործելու, առկալված են լինում կամայ ակամայ մնալ քաղաքում, իրանց ընտանիքով: Այսպիսով այս գիւղից Բազուն խլած ունի 40—45 դերձաստան: 1884 թ.ից գիւղացիները հիմնած ունեն ցորենի մի հասարակական շտեմարան, որը մինչև այժմ ժողոված ունի հարկը թողար ցորեն: Գիւղացին անարգել կարող է վերջին շտեմարանից որքան հարկաւոր է, և ունեցած ժամանակ թեթեւ տոկոսով վերադարձնել շտեմարանի հողաբաժնութեանը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լօնդոնից իւրի լուր հեռագրում են, որ իւր թէ Միացեալ-Նահանգների նախկին նախագահ Կլիվլենդի կեանքի դէմ փորձ է եղել և որ Կլիվլենդը ծանր վիրաւորված է:

— Նոր տօմարի համեմատ, արտասահմանում արդէն ծննդեան տօները հասել և անցել են: Այդ տօների առթիւ, ըստ տղորութեան, եւրօպական մամուլը նորից սկսեց խօսել քաղաքական հարցերի և խաղաղութեան ապագայի մասին: Մամուլը այդ կողմից աւելի յօռնեան է, թէ և յոռնեան լինելուց յետոյ էլ նա այն միտքն է յայտնում, որ խաղաղութիւնը 1889 թ.ին չի խախտվի:

— «Neue Freie Presse» լրագիրը, մասնաւոր անկողն ալ քանի վրա, որ այժմեան զինուորական խաղաղութիւնը աւելի թանկ է նստում Եւրօպային, քան թէ պատերազմը, դիմում է Գերմանիային հետեւել խաղաղութիւնը: Գերմանիան մարդկութեանը մեծ ծառայութիւն արած կը լինի, եթէ յանձն առնէր ընդհանուր զինադադարի նախաձեռնութիւնը: Կասկածում ենք, որ այդ խօսքերը շատ էլ դուր գային իշխան Բիսմարկին:

— Բէլգրադից հեռագրում են, որ Միլան թագաւորը դաժնից հրաժարվելու լուրերը հիմնովին չեն ունեն:

— Արմատական կուսակցութիւնը համաձայն է սերբիական սահմանադրութեան վերջին խմբագրութեան մի քանի կէտերի հետ, և այդ պատճառով արմատականները կազմում են զինադադարի կուսակցութեան գլխաւոր ուժը, որովհետեւ, ինչպէս յայտնի է, արմատականները մեծամասնութիւն են կազմում սկուպիներին մէջ:

— Սօֆիայից հեռագրում են, որ Պոպով Ստամբուլում մենամարտութեան (դուէլ) է կանչել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՕՆԿՈՆ, 21 դեկտեմբերի: Վիկտորիա թագուհին չնորհել է Թէհրանի բրիտանական դեսպան Մէր Գրոմոնտ-Գոլիցին առաջին կարգի «բաղանիք» շքանշանը, կարուն գետի վրա նստադնադրութիւն բանալու պատճառով: Ֆրանսիական կառավարութիւնը նշանակել է մի փոխ-հիւպատոս Բուշիրում: Դարձ պատրաստվում է ծանապարհորդելու գէպի Եւրօպա, որը ենթադրվում է անել դարնանը:

ԲԵԼԳՐԱԿ, 22 դեկտեմբերի: Մեծ սկուպիներն 494 ձայներով առաւելութեամբ ընդդէմ 73-ի, ընդունեց նոր սահմանադրութիւնը:

ԲԵԼԳՐԱԿ, 23 դեկտեմբերի: Երէկ մեծ սկուպիներն փակվեց թագաւորի ճառով, որով նա յայտնեց թէ Սերբիայի համար սկսվում է նոր դարաշրջան, ապա թագաւորը ստորագրեց նոր օրդինական օրէնքը:

ԳՐՆԿՈՆԿ, 23 դեկտեմբերի: «Визань» շոգենաւի հրամանատարը և օֆիցերները չնորհաւորում են ազգականներին և ծանօթներին առաջիկայ տօները: Ամենքն առողջ են:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՏ

ՄԱՐՏԻՑԻ. Կ. Գ. Կ. Շատ ուրախութեամբ կանխելով, բայց ցաւում ենք որ չենք կարող անել:

Թմբաղի-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Կեկտեմբերի 22-ին իր կայացած նիստի մէջ ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ԳՈՐԾԱՆ, աչքի առջև ունենալով արտասովոր ցրտերը, որոնց, նշանակել 1,000 բուլղի, որպէս օժանդակութիւն քաղաքի կարօտեալ բնակիչներին և բանալ ցտորադրութիւն նուիրատուութիւններ հաւաքելու նոյն նպատակով: Յայտնելով այդ մասին ընդհանուր գիտութեանը, քաղաքային վարչութիւնը խնդրում է բարեգործներին իրանց նուիրատուութիւնները յանձնել Ուպրաւլայի հերթակալ անդամին, ամեն օր, 10 ժամից առաւօտեան մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:

Հողոր իշխանութեան կարգադրութեան համաձայն ամսի 25-ին կիրակի օրը, Սուրբ պատարդից յետոյ, ժամը 12-ին, պէտք է կատարվի Մոնում Սուրբ Գեորգ եկեղեցու նոր երեցիօրանի ընտրութիւնը: Ուստի յիշեալ եկեղեցու մեծապատիւ ծխականները հրաւիրվում են նոյն օրը մասնակցելու յիշեալ ընտրութեանը, որ տեղի կունենայ նոյն եկեղեցու Ս. Գայանեան օրհորդաց դպրոցի դահլիճում:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱՍԿԻ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, յունիսի 5-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) ղուրս կը դնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլս և Մարսել: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմբոյուրի տան, Նարբէքեֆեայա, և Թիֆլիսում Նոսիկին Արծրունի դալիւրում, № 103.

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДѢ
Տիֆլիս, Дворцовая ул., КАРАВАНСАРАЙ БЫВШІЙ АРЦУНИ.

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՇԵՍ
Գլորիօպա փողոց ՆԱԽԻՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ քաղաքականարայում
Ստացված են
ՊԱՏՐԱՍ ԲԵՐԶԷՆՏՆԵՐ ամեն տեսակ չափերի
2—10 (2) ԳՕՆԵՐ և ԼԵՑՑ

ОПТИЧЕСКОЕ ОТДѢЛЕНИЕ
ВЪ МАГАЗИНѢ ЧАСОВЪ
М. Г. ЦЕЙТЛИНА
противъ Дворцоваго сада, угловой магазинъ.
ВСЕВОЗМОЖНЫЕ ОЧКИ, ПЕНСЭ, ЛОРНЕТЫ И ТЕРМОМЕТРЫ.
отпускаются въ точности по рецептамъ г.г. врачей, по новой метрической и прежней дюймовой системѣ. Починки и вставки стёколъ.
ЦѢНЫ САМЫЯ УМѢРЕННЫЯ.

БОЛЬШАЯ РАСПРОДАЖА
ЦЕНТРАЛЬНЫЙ ГАЛАНТЕРЕЙНЫЙ МАГАЗИНЪ
Մ Ե Ծ Վ Ա Ճ Ա Ռ Ո Ւ Մ Ն

Միայն մինչև նոր տարի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱԼԱՆԵՐԵՅԻՆԱԿԱՆ ՄԱԳԱՑԻՆՈՒՄ, Երևանեան հրապարակի վրա, Զուբալովի տանը, քաղաքային Սկուպի և ուսուցիչ Մեմիսարայի դիմաց:
Ամեն տեսակ զարդաներէական և մօզային ապրանքներ, տնային-տնտեսական առարկաներ, լամպաներ, լապտերներ, մեխիօրից և բրնձեղայ իրեր, ամանեղէններ, սեղանի պարագաներ, ֆօտօգէնեան խոհանոցներ, բարակ ձերմակեղէն, ֆուֆայաներ, գուլպաներ, աղուկներ, ծածկոցներ, սայֆէտներ, կոշիկներ, գլխարկներ, կորսեաներ, գլխի աղուկներ, Ժեպէներ և այլն: Մեծ ընտրութիւն մանկական խաղալիքների, տիկիների և արքաների:

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ւ
ԱԲԻՍՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ
ՌՈՒՍԵՐԵՆԻՑ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԴԻՐԻ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ
Գինն է 3 բուլղի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:
Միանուագ քանից աւելի գնողին զիջումն կը լինի:

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԷՍ Խիզիկէի և ընկ. գրավաճառանոցում, Թիֆլիս, Գոլովինսկի Պրոսպեկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ:
25—40

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ւ
Օ Ր Ա Յ Ո Յ Տ Ն Ե Ր

Ա. Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեանի և այլն պատկերներով, երազահանով: Գինը 10 Կ.: (ճանապարհահատով 14 Կ.):
Բ. ՄԵՄԱԳԻՐ—ՊԱՏԿԵՐԱՊԱՐԻ Կայրի և իր Օգոստոսիան Ընտանիքի, հայ բարձրատիկան հոգեւորականների, հեղինակների պատկերներով, տեսարաններով: Ընդարձակ յաւելում. կենսագրութիւններ, պատմական և այլն յօդուածներ, բանաստեղծութիւններ, առեւտրական և այլն և այլն. զանազան կարեւոր տեղեկութիւններ: Գինը 25 Կ.: (ճանապարհահատով 30 Կ.):
«Աղբիւր» բաժանորդները ճանապարհահատ չեն վճարում: Գումարով առնողներին զիջումով: Պահեստը «Աղբիւր» վաճառանոցում: Կ. ՓԱՍԿԻ